ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՁՈՀԵՐԻ

2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի երկրորդ տարելիցի կապակցությամբ Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել է «Հանուն հայրենիքի պետք է ապրել» խորագրով հուշ-ցերեկույթ, որի շրջանակներում «Հայ զինվորի բարոյահերոսական կերպարը» թեմայով անց է կացվել դասախոսություն-քննարկում:

Միջոցառման սկզբում նախ հարգանքի տուրք է մատուցվել զոհված տղաների հիշատակին:

Օրհնության խոսք է ասել Ստեփանակերտի Սուրբ Հակոբ եկեղեցու քահանա Տեր - Մինաս քահանա Մովսիսյանը:

«Երկու տարի առաջ այս օրը մեր սքանչելի երկիր Արցախ աշխարհը մեծ արհավիրք ապրեց, և այս երկրի ապագան էին ուզում կերտել մեր հերոսները: Մեզ համար սուրբ պարտականություն է այսօր հիշատակելու մեր նահատակների հիշատակը: Այս արարչական երկրի համար այդ տղաները մոռացան ամեն ինչ, երդվեցին հանուն հայրենիքի չխնայել սեփական կյանքը և նրանք ընկան, որպեսզի պաշտպան կանգնեն հայրենիքին», - ասել է Տեր - Մինաս քահանա Մովսիսյանը:

Իրավունքի ամբիոնի վարիչ Տաթևիկ Գևորգյանը նշել է, որ իր դարավոր պատմության ընթացքում հայ ժողովուրդը բազում անգամներ կանգնել է պետականության, հավատքի կորստի և գոյության պայքարի առաջ:

«Միգուցե տարիներ հետո պատմության էջերը թերթելիս այսօրվա մեր ապրումները կներկայացվեն ընդամենը որպես մի փոքր դրվագ, բայց այսօր այդ ապրումների կրողը մենք ենք, և իրականությունից հնարավոր չէ փախչել: Լույս դարձած մեր տղաները ապացուցեցին, որ պետք է սիրես այն, ինչ քոնն է, փայփայես ու պատվես: Ես վստահ եմ, որ նրանք գնացել են գլուխները բարձր, որովհետև հայ զինվորի ոգին անկոտրում է, իսկ հայի տեսակը՝ պայքարող»,-ասել է Տ.Գևորգյանը:

Բուհի ռեկտոր Արմեն Սարգսյանի խոսքով՝ պատերազմից հետո բուհում կազմակերպվող ցանկացած միջոցառման ժամանակ պետք է հիշատակվեն հերոսացած տղաները:

«Այսպիսի միջոցառումներ, ինչքան էլ մենք կազմակերպենք, առաջին հերթին անհրաժեշտ են ոչ թե մեր զոհված տղաներին կամ նրանց հարազատներին, այլ՝ մեր նոր սերնդին: Այսօր, երբ մենք կանք, ապրում ենք Արցախում, սովորում ենք, առաջին հերթին պարտական ենք այդ տղաներին»,-հավելել է ռեկտորը:

Հուշ-ցերեկույթի ընթացքում ներկայացվել են պատերազմից դրվագներ, ուսանողները հանդես են եկել երաժշտական ու բանաստեղծական կատարումներով:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Ս.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 06(243)
սեպտեմբեր - 2022

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԴԱՍ ԱրՊՀ-ՈՒՄ

Նոր ուսումնականը Արցախի պետական համալսարանում մեկնարկեց հիմնանորոգված մասնաշենքում: Ուստարին, ավանդույթի համաձայն, սկսվեց Անկախության դասով, որին ներկա էին Արցախի Հանրապետության պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԱՀ ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Հասմիկ Մինասյանը, «Պահեստազորի սպաներ» ՀԿ նախագահ Կարմեն Ասլանյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, համալսարանի դասախոսներ և ուսանողներ: Միջոցառումը մեկնարկեց լռության րոպեով՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների:

Ներկաներին ողջունել և տոների առթիվ շնորհավորել է ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը. «Շնորհավորում եմ բոլորիդ Արցախի Հանրապետության անկախության, Գիտելիքի և դպրության օրվա և հիմնանորոգված, միջազգային չափանիշներին համապատասխանող մասնաշենքում ուսումնական պարապմունքների մեկնարկի կապակցությամբ: Մաղթում եմ, որ մեզնից յուրաքանչյուրը ձգտի իր աշխատանքում լինել լավագույնը, և այդպես մենք կկարողանանք հաղթահարել դժվարությունները»: Ռեկտորը նաև շնորհակալություն է հայտնել պետնախարարին՝ նոր մասնաշենք տեղափոխվելու աշխատանքներին օժանդակելու համար՝ նշելով, որ շենքի պաշտոնական բացումը կլինի կահավորման և մյուս անհրաժեշտ սարքավորումներով համալրելու աշխատանքների լիովին ավարտից հետո:

ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, շնորհավորելով ուսանողներին, իր խոսքում շեշտել է Արցախի բացառիկության գաղափարը գերակա պահելու սկզբունքը բոլոր ձեռնարկումներում:

Ուսանողների հետ հարցուպատասխանի միջոցով նա շեշտել է համազգային նպատակներին հասնելու ուղիները, Արցախի բացառիկության գիտակցումը՝ արցախականությունը, և այդ գաղափարի շուրջ հայության նուրոյժի համախմբումը, որն էլ Արցախի լինելիության երաշխիքն է:

«Արցախն իր բացառիկությամբ հայկականության արգելոց է, հայկականության ինքնության զարթոնք և միասնականության խթան է»,-նշել է ԱՀ պետնախարարը՝ հավելելով, որ պետք է միասնական աշխատանքով կարողանալ պահպանել այն՝ հաղթահարելով պատերազմից հետո ի հայտ եկած դժվարություններն ու խոչընդոտները:

ԱՀ ՊԲ հրամանատարի ԲՀԱ գծով տեղակալ, գնդապետ Նորայր Մկրտչյանը հանդես եկավ դասախոսությամբ՝ նվիրված Արցախի Հանրապետության անկախության հռչակմանը: Պատմական անդրադարձ կատարելով Արցախի հարցի ծագման, Ադրբեջանի կողմից հայ ժողովրդի հանդեպ տարբեր ժամանակաշրջաններում իրականացված էթնիկ զտումներին ու այսօր էլ շարունակվող ցեղասպան քաղաքականությանը՝ նա շեշտել է. «Տասնամյակներ շարունակ Արցախը միջնաբերդի դեր ուներ, այսօր այդ միջնաբերդը խոցված է: Առանց Արցախի վտանգված է հայ ժողովրդի գոյությունը, Հայաստանը: Արցախի անկախությունը հայ ժողովրդի գոյության բանալին է: Այսօրվա իրողությունները հրամայաբար թելադրում են համախմբվել և միասնաբար դիմակայել՝ ամեն մեկս մեր ոլորտում աշխատելով և միջազգային հանրությանը ցույց տալով, որ մենք հետ չենք կանգնում մեր որդեգրած սկզբունքներից»:

ԵՐԹ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արցախի Հանրապետության հռչակման օրվան նվիրված սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի է ունեցել բազմահազարանոց երթ դեպի Վերածննդի հրապարակ, որտեղ էլ կայացել է հանրահավաք: Երթին և հանրահավաքին իրենց մասնակցությունն են ունեցել ԱրՊՀ ուսանողներն ու դասախոսները՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ:

«Արցախի ժողովրդի պայքարը անկախության համար ոչ թե տարիների, տասնամյակների, այլ առնվազն հարյուր տարվա պատմություն ունի: Անկախության համար պայքարի վերջին փուլը ողբերգական ընթացք ունեցավ, սակայն ոչինչ և ոչ-ոք չի կարող ընկճել արցախցու պայքարող ոգին: Արցախի ընտրությունը վերջնական է և անբեկանելի: Շնորհավոր անկախության տոն»,-նշել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը՝ օրվա առթիվ բոլորին մաղթելով հույս, հավատ և վստահություն:

ԱՐՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԷԿԵԼ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԶԵՓՅՈՒՌ ՍԻՄՈՆՅԱՆԸ

Սեպտեմբերի 8-ին Արցախի պետական համալսարան է այցելել Ամերիկայի հայ փաստաբանների միության անդամ, Լոս Անջելեսի առաջին ատյանի վերահսկող փաստաբան, միջազգային իրավունքի մասնագետ, դոկտոր Զեփյուռ Սիմոնյանը և «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող ուսանողների համար հանդես եկել դասախոսությամբ:

Դասախոսությունը վերաբերում էր իրավաբանական գրագրությանը, որի շրջանակում բանախոսը ներկայացրել է հիմնականում IRAC համակարգի կիրառման առանձնահատկությունները ԱՄՆ-ում: Զ. Սիմոնյանը պատասխանել է նաև ուսանողների հարցերին:

Հանդիպման ընթացքում նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն ԱրՊՀ ուսանողների համար ուստարվա ընթացքում պարբերաբար հանդես գալ հեռավար դասախոսությամբ՝ նախապես հստակեցնելով նաև դասախոսությունների թեմաները:

ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ, հ. գ. թ., դոցենտ Տաթև Գևորգյանը շնորհակալություն է հայտնել Զեփյուռ Սիմոնյանին և Ամերիկայի հայ փաստաբանների միությանը՝ ԱրՊՀ «Իրավագիտություն» կրթական ծրագրով սովորող ուսանողներին մշտապես ուշադրության կենտրոնում պահելու համար. «Շատ կարևորում եմ նման հանդիպումները, որոնք թույլ են տալիս մեր ուսանողներին նոր գիտելիքներ ձեռք բերել նաև ոչ ֆորմալ կրթության միջոցով, ճանաչել տարբեր մասնագետներին, ծանոթանալ նրանց դասավանդման մեթոդիկային և, պարզապես, հնարավորություն ունենալ շփվել նրանց հետ»:

ԿԱՅԱՑԵԼ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 26-ին Արցախի պետական համալսարանում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի, «Էրուդիցիա» և «Էմպաթիա» հոգեբանական կենտրոնների, Ինտեգրատիվ հոգեթերապիայի միության (IPP, Society for Integrative Psychotherapy, SIP) նախաձեռնությամբ կազմակերպվել է հոգեբանական աշխատաժողով՝ նպատակ ունենալով օգնելու ուսանողներին և մասնագետներին՝ զարգացնելու իրենց գիտելիքներն ու կարողությունները, ձևավորելու համագործակցային հարթակ: Աշխատաժողովին մասնակցել և քննարկումը վարել է Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր, հ.գ.դ, Ալլեն Ազիզյանը, ներկա էին ԱՀ և ՀՀ հոգեբաններ, ԱրՊՀ «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանն աշխատաժողովի նշանակությունը կարևորել է հետազոտողներին և մասնագետներին համախմբելու, հոգեթերապիայի տարբեր դպրոցների սկզբունքների ինտեգրման վերաբերյալ իրենց փորձը կիսելու, ակադեմիական համագործակցությունը խորացնելու, ուսանողների պրակտիկ գիտելիքների զարգացման, ինչպես նաև միջազգային փորձի տեղայնացման տեսանկյուններից:

«2020 թ. 44-օրյա պատերազմից երկու տարի անց բնակչության շրջանում առկա են հետվնասվածքային սթրեսային նախանշաններ՝ անորոշություն, տագնապ, հուսահատություն, անվտանգության զգացման խաթարում և այլն: Սակայն սրանք խնդիրներ են, ոչ թե՝ դատավճիռ, իսկ խնդիրները հաղթահարելի են»,- «Հետվնասվածքային սթրեսային հակազդումների հաղթահարման խնդիրը 44-օրյա պատերազմից հետո» թեմայով զեկուցման ընթացքում նշել է Վ. Յարամիշյանը՝ ներկայացնելով 44-օրյա պատերազմի պատճառած վնասները, ստեղծված հոգեբանական խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ իրականացված և շարունակվող հոգեբանական աշխատանքները և իր խոսքում շնորհակալություն հայտնել այդ աշխատանքներում ներդրում ունեցած հոգեբաններին ու կազմակերպություններին, այդ թվում նաև՝ ՌԴ խաղաղապահ զորակազմի հոգեբաններին, ովքեր զգալի աշխատանք են իրականացրել բնակչության շրջանում, նաև ԱրՊՀ-ում, հետտրավմատիկ սթրեսի հաղթահարման ուղղությամբ:

«ԿԽՄԿ, Բժիշկներ առանց սահմանի, ԵՊՀ, ՀՊՄՀ, ՀՊԲՀ հոգեբաններ, Սփյուռքի հայ մասնագետներ. նրանց ցուցաբերած հոգեբանական աջակցությունը նպաստել է հետվնասվածքային սթրեսի հաղթահարմանը»,-նշել է Վ. Յարամիշյանը՝ հետվնասվածքային սթրեսային հաղթահարման գործընթացում կարևորելով ակտիվ կենսակերպ վարելը՝ ընդգծելով ՀՎՍՀ դրսևորումները ժամանակին կարգավորելու անհրաժեշտությունը:

Կալիֆորնիայի պետական համալսարանի պրոֆեսոր, հ.գ.դ, Ալլեն Ազիզյանը հանդես եկավ «Ինտեգրատիվ հոգեթերապիա. թերապևտիկ փոփոխությունների սկզբունքները» թեմայով:

«Պետք է ունենալ կյանքի նպատակներ և գնալ այդ նպատակների հետևից»,-ընդգծել է Ալլեն Ազիզյանը:

Աշխատաժողովի ընթացքում հոգեբան մասնագետները հանդես են եկել զեկուցումներով՝ «Թերապիա մեկ սեանսի միջոցով (Single Session Therapy). մեթոդի ներածություն» (Ռուզաննա Ազատյան, Երևանի Պետական Բժշկական Համալսարան), «ՀՏՍԽ /PTSD/ բուժում. 2020թ. Արցախի 44 օրյա պատերազմի տվյալների ամփոփում» (Լիանա Թերզյան, հ.գ.թ, Երևանի Պետական Բժշկական Համալսարան), «Տոկունություն և հետտրավմատիկ աճ» (Խաչատուր Գասպարյան, հ.գ.թ, Երևանի Պետական Բժշկական Համալսարան, Անի Ազիզյան «Ինքրա» հոգեկան առողջության կենտրոն): Աշխատաժողովն ուղեկցվել է քննարկումներով, մասնակից մասնագետներն արտահայտել են իրենց տեսակետները առկա խնդիրների վերաբերյալ:

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրը Արցախի պետական համալսարանում նշանավորվեց առաջին կուրսեցիների երդման հանդիսավոր արարողությամբ:

Առաջին կուրսեցիների երդման արարողությունը մայր բուհի ավանդական միջոցառումներից է: Սեպտեմբերի 21-ին ԱրՊՀ զոհված ուսանող-ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ կայացավ երդման հանդիսավոր արարողությունը, որին մասնակցում էին ԱՀ պետնախարար, ԱրՊՀ խորհրդի նախագահ Արտակ Բեգլարյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, հասարակական գործիչ, բարերար Ռուբեն Վարդանյանը, ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Նարինե Աղաբալյանը, համալսարանականներ: Միջոցառումը մեկնարկեց լռության րոպեով ու ծաղիկներ խոնարհելով՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների:

Ուսանողների երդման խոսքը ազգային և համամարդկային արժեքների պահպանման, գիտելիքների ձեռքբերման և հանուն հայրենիքի ու մարդկության բարօրության ծառայելու պարտավորվածության խոսք էր. «Երդվում ենք վառ պահել նահատակված ուսանողների հիշատակը, հավատարիմ մնալ նրանց վեհ գաղափարներին, պատվով և պատասխանատվությամբ շարունակել նրանց կիսատ թողած գործը, սիրել և սրբությամբ պահպանել հայրենի երկրի զարգացման և բարգավաճման ուղին բռնած մայր բուհը»:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, ողջունելով ներկաներին, ռեկտորատի, գիտխորհրդի և պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհավորել է առաջին կուրսեցիներին ՀՀ անկախության տոնի և երդման արարողության առթիվ:

«Մայր բուհում ավանդույթ է դարձել առաջին կուրսեցիների երդման արարողությունը: Երդում, որը կատարվում է մեր լույս տղաների հիշատակը հավերժացնող հուշակոթողի մոտ. ասել է թե՝ Դուք, սիրելի՝ առաջին կուրսեցիներ, երդվելով այս հուշարձանի մոտ, պարտավորվում եք Ձեր ամբողջ կյանքում համալսարանում ձեռք բերված գիտելիքները, փորձը կիրառել միմիայն հայրենիքի բարգավաճման համար»,-նշել է ռեկտորը՝ համոզմունք հայտնելով, որ երդմամբ ստանձնած պարտավորությունները ուսանողները կատարելու են անշեղորեն:

ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը, Արցախի Հանրապետության իշխանությունների և ԱրՊՀ խորհրդի անունից ՀՀ անկախության տոնի և երդմնակալության առթիվ շնորհավորելով ուսանողներին, խորհրդանշական է համարել միջոցառման կազմակերպման օրն ու վայրը, և դիմելով ուսանողներին՝ նշել է. «Այն կրթությունը, որը պետք է Դուք ստանաք Արցախի պետական համալսարանում, արժեքահեն կրթություն է. արժեքահեն, որովհետև հանուն անկախության, ազատության և մեր ազատամարտիկների նվիրման արժեքների ու գաղափարների Դուք պատրաստ եք կրթություն ստանալ և շարունակել մեր նախնիների, մեր ավագների կողմից ընտրված ճանապարհը: Շատ ուրախ եմ, որ համալսարանը շարունակում է այս ավանդույթները և տարեցտարի բարելավում պայմանները, որի շնորհիվ համոզված եմ, որ տարիների ընթացքում, նաև Ձեր ջանքերով, Ձեր ստացած կրթության հիման վրա համատեղ ուժերով մենք կկարողանանք հաղթահարել մեր պետականության ու անկախության առջև ծառացած և ապագայում ծառանալիք խնդիրները»:

Ուսանողներին շնորհավորել է նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Անահիտ Հակոբյանը, հասարակական գործիչ և բարերար Ռուբեն Վարդանյանը:

Արարողության ընթացքում ուսանողները հանդես են եկել ասմունքով և հայրենասիրական երգերի կատարմամբ, իսկ ամենաբարձր միավորներով բուհ ընդունված առաջին կուրսեցիները՝ հանդիսավոր ստացել իրենց ստուգման գրքույկներն ու ուսանողական տոմսերը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԵՏ

Հայտնի գործարար և բարերար, «Ապագա հայկականը» շարժման նախաձեռնող Ռուբեն Վարդանյանը սեպտեմբերի 7-ին այցելել է Արցախի պետական համալսարան և հանդիպել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Ողջունելով Ռուբեն Վարդանյանին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել նրան ԱրՊՀ այցելելու և համալսարանականների հետ հանդիպելու համար. «Մեծ սիրով ենք ընդունել Արցախ տեղափոխվելու Ձեր որոշումը: Ողջունում և շնորհակալություն ենք հայտնում, որ այստեղ եք»:

Արցախում հանդիպումների մեկնարկը Արցախի մայր բուհից սկսելը հանրային գործիչ Ռ. Վարդանյանը պատահական չի համարում՝ առաջնահերթությունների շարքում կարևորելով կրթությունն ու դրանով նաև պայմանավորելով երկրի ապագան: Այս սկզբունքով է նա իր գործունեության ընթացքում ներդրումների մեծ մասն ուղղել կրթության ոլորտի զարգացմանը:

«Այսօր մեր կրթությունը մրցունակ չէ, որը մեծ խնդիր է: Այս ուղղությամբ պետք է աշխատել միասնական ջանքերով»,- համոզմունք է հայտնել նա՝ հավելելով, որ պետք է վերականգնել գիտելիքի և դասավանդողի հանդեպ երբեմնի հարգանքը, ինչը վերջին տարիներին տեսանելի չէ:

Ռ. Վարդանյանը համալսարանականների հետ քննարկել է երկրի առջև ծառացած խնդիրները, համալսարանականներից լսել խնդիրներ և առաջարկություններ, ներկայացրել խնդիրների լուծման իր տեսլականը:

Խոսելով անվտանգային ոլորտից՝ Ռ. Վարդանյանը կարևորել է Արցախում ՌԴ խաղաղապահ զորակազմի տեղակայման ժամկետների երկարաձգման, խաղաղապահների մանդատի հստակեցման հարցն ու ազգ-բանակ հայեցակարգի իրագործումը:

«Արցախի հարցը պետք է լուծվի Արցախում ապրող ժողովրդի կամքով»,- ընդգծել է Ռ. Վարդանյանը:

«Չի կարող լինել անվտանգ երկիր՝ առանց զարգացած տնտեսության: Այսօր պատերազմն ընթանում է տարբեր ուղղություններով, այդ թվում՝ ինֆորմացիոն դաշտ, հոգեբանական պատերազմ և այլն: Շատ կարևոր է մարդկանց մոտ վերականգնել և ամրապնդել հույսը, հավատը ապագայի հանդեպ, երկարաժամկետ ապագայի, և դա պետք է արվի խորքային փոփոխությունների միջոցով»,- ասել է Ռ.Վարդանյանը՝ առայժմ փակագծեր չբացելով իրականացվելիք ծրագրերի մասին ու հավաստիացնելով, որ առաջիկայում գործով տեսանելի կլինեն:

ԽԱՉԵՐԹ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ

Սեպտեմբերի 27-ին մայրաքաղաքի Սուրբ Հակոբ եկեղեցու բակից հազարավոր քաղաքացիների մասնակցությամբ տեղի է ունեցել Խաչերթ՝ ի հիշատակ Արցախյան երրորդ պատերազմում նահատակված հերոսների: Խաչերթին մասնակցել և անմահացած հերոսների հիշատակին հարգանքի տուրք են մատուցել Արցախի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները: Հավերժ փառք ու պատիվ մեր անմահացած հերոս քաջորդիներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հանրային գործիչ, բարերար Ռուբեն Վարդանյանը սեպտեմբերի 8-ին Արցախի պետական համալսարանում հանդիպել է Արցախում գործող բուհերի ուսանողության հետ, խոսել Արցախ այցելելու իր նպատակների ու անելիքների մասին, պատասխանել երիտասարդությանը հետաքրքրող հարցերին:

«Ինձ համար Արցախը վաղուց դարձել է այն վայրը, որտեղից ես ուժ եմ ստանում, զգում իմ հայ լինելը և հայ լինելու կարևորությունը: Ես այստեղ եմ՝ ձեր կողքին լինելու, ձեզ հետ միասին այստեղ մնալու համար: Ես պատրաստ եմ ամեն ինչ անել, որպեսզի նպաստեմ Արցախի անվտանգության ապահովմանը: Պետք է ամեն ինչ անենք, որպեսզի Արցախում ապահովվի երկարաժամկետ անվտանգություն, Արցախը պահպանի իր հայկականությունը, և Արցախում ապրող հայը անվտանգ ապրի, ոչ թե գոյատևի, այլ՝ զարգանա: Այդ ուղղությամբ շատ խորքային ու լուրջ աշխատանք պիտի տարվի: Ես ուրախ և հպարտ եմ, որ ձեր կողքին եմ»,- դիմելով երիտասարդությանը՝ նշել է Ռուբեն Վարդանյանը՝ վստահություն հայտնելով, որ Արցախն ունի ապագա, թեև դեռ վտանգը չի ավարտվել:

Իսկ վտանգներն ու խնդիրները հաղթահարելու համար հանրային գործիչն առաջնահերթություններից է համարում մրցունակ կրթությունը, զարգացած տնտեսությունը, երկրի պաշտպանունակությունը:

«Ոչ մի փաստաթուղթ չի կարող խաղաղություն ապահովել, եթե դու ինքդ ընդունակ չես քեզ պաշտպանելու: Մենք պետք է ուժեղ լինենք»,-շեշտել է նա:

Երիտասարդների հետ հանդիպման առանցքային նպատակներից մեկը, Ռ. Վարդանյանի խոսքով, առաջիկա ծրագրերում երիտասարդների տեսակետներն ու առաջարկությունները ներառելն է, որոնք ուղղված կլինեն Արցախում կայուն ու անվտանգ կենսագործունեություն ու զարգացում ապահովելուն:

Ուսանողներն իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները Ռ. Վարդանյանից լսելուց հետո գրավոր ներկայացրել են նաև առաջարկություններ ու տեսակետներ տարբեր խնդիրների վերաբերյալ:

Ռ. Վարդանյանի խոսքով՝ նմանատիպ հանդիպում-քննարկումները շարունակական կլինեն:

ԿԱՁՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Սեպտեմբերի 24-ից ԱրՊՀ-ում ԱՀ ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ «Աջակցություն Արցախի երիտասարդներին» միջոցառման շրջանակում մեկնարկել են «Մեդիագրագիտություն և քննադատական մտածողություն» խորագրով երկօրյա դասընթացներ, որոնց մասնակցել են Արցախի Հանրապետությունում գործող բուհերի ուսանողներ:

Դասընթացները վարել են ՀՀ մեդիափորձագետներ Արմեն Սարգսյանը և Նունե Հախվերդյանը:

Դասընթացի շրջանակում մեդիափորձագետներն ուսանողներին տրամադրել են տեսական գիտելիքներ մեդիագրագիտության հիմունքների, մեդիայի պատմության, հաղորդակցության, լրատվական միջոցների ու տեղեկատվական խողովակների, տեղեկատվության արտադրման փոփոխությունների, մանիպուլյացիայի, փաստերի ստուգման, գովազդի, քարոզչության, իրազեկման, թվային հետքի, սեփական մեդիակարիքների, առցանց անվտանգության, կախվածության և հարակից այլ թեմաների վերաբերյալ:

Դասընթացի ընթացքում ուսանողները կատարել են նաև գործնական առաջադրանքներ՝ տեսական նյութը գործնականում կիրառելու, հմտություններն ու կարողությունները ամրապնդելու և զարգացնելու նպատակով:

Կարևորելով մեդիագրագիտության անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհում՝ մեդիափորձագետ Արմեն Սարգսյանը նմանատիպ միջոցառումներն անհրաժեշտ է համարում հատկապես այս օրերին:

«Հատկապես այս օրերին մենք տեսնում ենք, թե ապատեղեկատվությունը ինչ խաղեր է խաղում մեր հասարակության գլխին, բառացիորեն կարող է քանդել համակարգեր, մարդկանց հույսեր տապալել, մարդկանց հասցնել խուճապի, նրանց լրացուցիչ հոգսեր պատճառել: Այս անգամ որոշեցինք խոսել ապատեղեկատվությունից և հետճշմարտությունից, այսինքն՝ այն ճշմարտությունից, որը հետո է գալիս, որովհետև ինչ-որ բան հնարավոր է տարածել, և մինչև մենք հասկանում ենք, որ դա սուտ է, գալիս է իսկական ճշմարտությունը, շատ դեպքերում ցավալիորեն բանը բանից անցած է լինում: Շատ կարևոր է, որ երիտասարդներն այդ ամենը իմանան, իրենք են առաջին հերթին հասու այն տեղեկատվական տեխնոլոգիաներին, որոնց միջոցով դրանք շատ արագ տարածվում են, իմանան և ինչ-որ մասով կանխեն ապատեղեկատվության տարածումը»,-նշել է Արմեն Սարգսյանը:

Դասընթացները շարունակվել են նաև սեպտեմբերի 25-ին: Ավարտին ուսանողներին տրվել են հավաստագրեր: